

5.3 Առողջապահություն

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության տվյալների, հանրապետությունում 2000թ. հունվար–սեպտեմբերին գրանցվել են հետևյալ տարափոխիկ հիվանդությունները.

(100 հազ. բնակչի և 0-14 տարեկան երեխաների հաշվով)

Հիվանդությունների անվանումը	Հունվար–սեպտեմբեր, ընդամենը		2000թ. հունվար–սեպտեմբերի աճը կամ նվազումը տոկոսով 1999թ. հունվար–սեպտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով)	Մինչև 14 տարեկան երեխաների մոտ		2000թ. հունվար–սեպտեմբերի աճը կամ նվազումը տոկոսով 1999թ. հունվար–սեպտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով)
	2000թ.	1999թ.		2000թ. հունվար–սեպտեմբեր	1999թ. հունվար–սեպտեմբեր	
Որովայնային տիֆ	0.4	1.1	- 63.6	0.8	2.3	- 65.2
Պարատիֆ Ա, Բ, Ց	0	0.1	0	0	0.1	0
Սալմոնելոզային ինֆեկցիաներ	4.9	6.4	- 23.4	16.6	20.0	- 17.0
Սուր աղիքային հիվանդություններ	77.8	244.9	- 68.2	222.6	503.6	- 55.8
այդ թվում՝ բակտերիալ դիզենտերիա	14.5	29.5	- 50.8	36.2	65.0	- 44.3
էնտերիտներ, կոլիտներ, գաստրոէնտերիտներ, սննդային տոքսիկոինֆեկցիաներ՝ հարուցված հաստատված հարուցիչներով	15.6	20.0	- 22.0	52.1	60.9	- 14.4
սուր աղիքային ինֆեկցիաներ՝ չհաստատված և չճշգրտված հարուցիչներով սննդային տոքսիկոինֆեկցիաներ	47.4	194.8	- 75.7	133.8	376.3	- 64.4
Շնչօրգանների տուբերկուլյոզ	14.1	13.4	5.2	1.7	2.7	- 37.0
Բրուցելյոզ առաջնակի ախտորոշված	2.1	2.1	0	1.6	1.8	- 11.1
Սուր թորոշմած պարալիչ	0.6	0.4	50.0	2.4	1.7	41.2
Վիրուսային հեպատիտ	33.7	43.9	- 23.2	86.7	120.0	- 27.8
այդ թվում՝ հեպատիտ Ա	31.0	39.5	- 21.5	84.6	113.6	- 25.5
հեպատիտ Բ	2.8	4.3	- 34.9	2.8	6.3	- 55.6
Պարոտիտ համաճարակային	74.1	230.1	- 67.8	259.5	804.4	- 67.7
Մալարիա՝ առաջնակի ախտորոշված	3.5	15.3	- 77.1	1.7	8.0	- 78.8
Սիֆիլիս	3.3	6.9	- 52.2	0.5	0.7	- 28.6
Սուր և քրոնիկական սուսանակ (հոնորեա)	6.4	5.5	16.4	0.2	1.2	- 83.3
Ոջլտություն /պեդիկուլյոզ/	1451.8	1124.8	29.1	5139.9	4119.0	24.8
Վերին շնչուղիների սուր ինֆեկցիաներ	3433.7	4299.1	- 20.1	7649.6	9272.8	- 17.5
Գրիպ	864.2	2643.1	- 67.3	1520.0	3921.1	- 61.2
Քոս	22.4	49.2	- 54.5	53.5	95.1	- 43.7

Ըստ տեղեկատվության նույն աղբյուրի, 2000թ. հունվար-սեպտեմբերի ընթացքում հանրապետությունում տարափոխիկ հիվանդությունների բռնկման դեպքեր չեն գրանցվել, սակայն արձանագրվել է որոշ տարափոխիկ հիվանդությունների նվազում: Մասնավորապես՝ նալարիայով հիվանդացության դեպքերի քանակը նվազել է 77.4%-ով, չհաստատված հարուցիչներով սուր աղիքային ինֆեկցիաները՝ 75.7%-ով, սուր աղիքային հիվանդությունները՝ 68.2%-ով, էպիդեմիկ պարոտիտը՝ 67.8%-ով, որովայնային տիֆը՝ 66.7%-ով, բակտերիալ դիզենտերիան՝ 51.0%-ով, սալմոնելոզային ինֆեկցիաները՝ 23.9%-ով, վիրուսային հեպատիտները՝ 23.3%-ով, և այլն:

2000թ. հունվար-սեպտեմբերի ընթացքում որովայնային տիֆով հիվանդացության 5 դեպք արձանագրվել է Գեղարքունիքի, 3-ը՝ Լոռու մարզերում, 2-ական դեպք Երևան քաղաքում և Շիրակի, 1-ը՝ Կոտայքի մարզերում:

Հանրապետությունում վիրուսային հեպատիտներով հիվանդացության նվազման պայմաններում, որոշ շրջաններում արձանագրվել է այդ հիվանդացության որոշակի աճ: Այսպես,

Եղեգնաձորի տարածաշրջանում (Վայոց Ձորի մարզ) այդ հիվանդացության դեպքերի քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 25-ով, Գուգարքի (Լոռու մարզ) և Իջևանի (Տավուշի մարզ) տարածաշրջաններում համապատասխանաբար՝ 36-ով և 15-ով և այլն:

2000թ. հունվար-սեպտեմբերին արձանագրվել է առաջնակի հայտնաբերված բրուցելյոզով, կապույտ հագով և հարկապույտ հագով հիվանդացությունների աննշան աճ համապատասխանաբար 2, 4 և 8 դեպքերով:

Արձանագրվել են նաև մի շարք այլ տարափոխիկ հիվանդացությունների աճ. մասնավորապես, 9-ական դեպքերով ավելացել են մենինգոկոկային /ուղեղի բորբոքում/ համաճարակի և սուր թորշոնած պարալիչի դեպքերի քանակը, ընդ որում մենինգոկոկային համաճարակով հիվանդացության 13 դեպքից 11-ը արձանագրվել է մինչև 14 տարեկան երեխաների մոտ: Այդ հիվանդացության 1-ական դեպքեր արձանագրվել են հանրապետության 11 տարածաշրջաններում, իսկ Կոտայքի տարածաշրջանում (Կոտայքի մարզ)՝ 2-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շնչառական օրգանների տուբերկուլյոզի հիվանդացության դեպքերի քանակն աճել է 28-ով, իսկ 0-14 տարեկան երեխաների մոտ արձանագրվել է այդ հիվանդացության դեպքերի նվազում՝ 10-ով:

2000թ. դիֆթերիայով և սիբիրյան խոցով հիվանդացության դեպքեր չեն արձանագրվել: